

ՀԱՍԱՐԱԿ ՀԵՐՊԵՍԻ ՎԻՐՈՒՍՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՎԱՐԱԿ

Հարուցիչները՝ Herpes simplex virus 1, Herpes simplex virus 2 (ՀՀՎ1, ՀՀՎ2):

ՄԻԱՎ վարակով պացիենտների մոտ ՀՀՎ1-ով պայմանավորված վարակն առավել հաճախ դրսևորվում է մաշկի և լորձաթաղանթների ախտահարմամբ: Հերպեսի առաջնային դրսևորմանը հետևում են հաճախակի կրկնությունները: Հերպետիկ ախտահարումները կարող են լինել տարածուն և պերսիստենտային, հնարավոր է վարակի դիսեմինացիա:

Կլինիկական նշանները

Մաշկի և լորձաթաղանթների ախտահարումն ընթանում է բերանի շուրջը, քթի, թևերի, շրթունքների և/կամ սեռական օրգանների վրա վեզիկուլաների և ցավոտ մակերեսային էրոզիաների առաջացումով: Երբ CD4+ լիմֆոցիտների քանակը <100բջջ/մկլ-ից, մաշկի ցանավորումն ավելի խոր է և երկարատև, հաճախ զարգանում են բշտիկախոցային և խոցանեկրոտիկ ստոմատիտ, գինգիվոստոմատիտ:

ՀՀՎ1-ով աչքերի ախտահարման ժամանակ դիտվում է կերատիտ կամ կերատոհրիդոցիկլիտ, հազվադեպ՝ ուլտիտ, կերակրափողի ախտահարման ժամանակ՝ էզոֆագիտ դիսֆագիայով, օդինոֆագիայով, կլման ժամանակ ցավերով:

ՀՀՎ2-ով հարուցված վարակը կլինիկորեն դրսևորվում է հիմնականում գենիտալ հերպեսով, կարող է ընթանալ ուրետրիտի, ցիստիտի, ցերվիցիտի, վագինիտի, էնդոմետրիտի, պերիանալ խոցերի, ճաքերի, պրոկտիտի ախտանշաններով: ՀՀՎ2-ով պայմանավորված կարող են լինել ասեպտիկ մենինգիտի, ռադիկուլոմիելոպաթիայի, միելիտի ախտանշաններ:

Դիսեմինացված հերպեսային վարակի դեպքում դիտվում են արտահայտված ինտոքսիկացիոն համախտանիշ, ներքին օրգանների՝ լյարդի, թոքերի, երիկամների ախտահարման ախտանշաններ՝ մեծամասամբ զուգակցված մաշկային և լորձաթաղանթային դրսևորումներով:

Հասարակ հերպեսը ՄԻԱՎ վարակ ունեցող նորածինների մոտ կարող է ընթանալ որպես գեներալիզացված վարակ՝ բազմաթիվ օրգանների ախտահարմամբ (25% դեպքերում), կամ տեղային վարակ՝ ԿՆՀ-ի (35% դեպքերում) և մաշկի, աչքերի ու բերանի խոռոչի ախտահարմամբ (40% դեպքերում): Մեկ ամսականից մեծ երեխաների մոտ ամենահաճախ դիտվող ձևը մաշկի և բերանի խոռոչի հերպետիկ վարակն է:

Էսիստ արտահայտված իմունային անբավարարության ժամանակ կարող է զարգանալ հերպետիկ էզոֆագիտ, էնցեֆալիտ, սեռական օրգանների հերպես, ինչպես նաև դիսեմինացված վարակ՝ լյարդի, մակերիկամների, թոքերի, երիկամների, փայծաղի և ուղեղի ախտահարմամբ:

Ախտորոշումը

- Բշտիկների, խոցերի պարունակության, բիոպտատի, ողնուղեղային հեղուկի մեջ ՊՇՌ մեթոդով ՀՀՎ1-ի և/կամ ՀՀՎ2-ի ԴՆԹ-ի հայտնաբերում:

- Իմունաբլոտի, մոնոկլոնալ հակամարմինների հետ ուղղակի իմունաֆյուորեսցենցիայի, ԻՖԱ մեթոդով վիրուս-սպեցիֆիկ հակամարմինների և հակաժինների հայտնաբերում:
- Համակարգչային տոմոգրաֆիա՝ գլխուղեղում հերպետիկ ախտահարման բազմաթիվ օջախներ՝ հատկապես քունքային տեղակայումով:
- Թոքերի ռենտգենաբանական հետազոտություն՝ երկկողմանի, ցրված, մանր, կլոր շրջագծով կարծրացումներ, երբեմն՝ նաև պլևրալ էքսուդատի առկայություն:

Բուժումը

ՀՀ-ով պայմանավորված վարակի բուժումը մեծահասակների և երեխաների մմանրամասն ներկայացված է «**Հակառետրովիրուսային դեղերի կիրառմամբ ՄԻԱՎ վարակի բուժման և կանխարգելման կլինիկական ուղեցույցում**»:

http://www.arm aids.am/images/pdf/ART_Guide_2017_new.pdf